Ակումբ - Հաղորդում

10.11.2011 11:19

07.11.2011թ. ՀՀ փաստաբանների պալատի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ փաստաբանների պալատի ակումբի նիստը, որը վարում էին ակումբի համակարգող, խորհրդի անդամ Մելանյա Առուստամյանը և պալատի նախագահի տեղակալ Արա Ջոհրաբյանը:

Արա Ջոհրաբյանը ակումբի նիստում իր ելույթը սկսեց փաստաբաններին միմյանց հետ ծանոթացնելուց հետո: Նա նշեց, որ ցանկացած միջոցառումից առաջ փաստաբաններին ծանոթացնելը պետք է դարձնել ավանդույթ, քանի որ միմյանց ճանաչող փաստաբաններն առավել հարգալից կլինեն մեկը մյուսի նկատմամբ:

Ակումբի նիստին մասնակցում էին խորհրդի անդամներ Սիմոն Բաբայանը, Կարինե Խաչատրյանը և Հայաստան Ստեփանյանը, ինչպես նաև այլ փաստաբաններ:

Ակումբի օրակարգի հարցը վերաբերում էր ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի և պետական ռեգիստրի մարմիններից համապատասխան փաստաթղթեր պահանջելու հետ կապված խնդիրներին:

Ակումբի հարցը ներկայացրել էր փաստաբան Կարինե Բաղդասարյանը:

Հնչեցին տարբեր առաջարկություններ և կարծիքներ: Փաստաբանները ներկայացնում էին իրենց փորձը այդ խնդրի վերաբերյալ:

Նմանատիպ ակումբային հանդիպումները շատ կարևորվեց, քանի որ ի վերջո դա միջոց է փաստաբաններին որևէ հարցի շուրջ համախմբելու համար:

Կարծիքների փոխանակումից հետո, ակումբը որոշեց ձևավորել խումբ հետևյալ հարցերի վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու համար՝

1. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումների կողմից փաստաբաններին կադաստրային գործերի նյութերին ծանոթանալու իրավունքին խոչընդոտելու վերաբերյալ.
2. Անհատական տվյալի բովանդակությունը և պետական մարմինների կողմից դրա հետ կապված մեկնաբանությունների վերաբերյալ:

Ակումբի հաջորդ նիստը տեղի կունենա 18.11.2011 թվականին՝ ժամը 18.00-ին, ՀՀ փաստաբանների պալատի դահլիճում:

ՀՀ փաստաբանների պալատի ակումբ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })